

մանակագրական գրութիւնը, թարգմանութեամբ և ծանօթութեամբ Պրոսէի : — Տեղեկութիւնք Ղաքարիայ սարկաւազէ Կապոնց, որ հեղինակ է Սոֆի իշխանաց վրայ պատմական յիշատակարանի մը. Des historiens Arméniens de XVII et XVIII siècles. — Arakel de Tauriz; Régistre chronologique, annoté par M. Brosset. Ընթերցեալ յ'81 հոկտ. 1872. — Traduction et annotations. — Notice sur le diacre arménien Zakaria Gabontz, auteur des Mémoires historiques sur les Sofis, XV—XVII siècles. Ընթերցեալ յ'12 նոյեմբ. 1873.

Շարայարեղի

Շ Ի Գ Ա Կ Օ

Յախտեանական քաղաքին և արեւմտեան այս շահաստանին մէջ շատ տարբերութիւն կայ. կ'ըսեն թէ Հռովմ մէկ օրուան մէջ չէ շինուած. իսկ Շիգակոյի համար ասոյդ է այս. Հռովմ եօթնաբլրանիստ է. ընդհակառակն Շիգակո իր կառուցման համար ստիպուեցաւ հող բերել և լեցնել : — Շատ ատեն չէ որ մեռաւ այն պատմական ծերուկը որ իւր աչօք տեսած էր ճախճախուսին քանի մը տանց և Chicauga բերդին մէջև շարուած ցիցերը հետեւեալ արձանագրութեամբ. « Զգուշանայի, վասն զի ծովը խոր չէ » :

Իննեւտասներորդ դարը իւր առաջին ամաց շրջանին մէջ, այժմեան Շիգակոյի տեղ՝ միայն ճախնային անպիտան երկիր մը գտաւ. բայց Միչիկան լճին ծայրը գտնուած այս կէտը՝ շատ օգտաւետ և յարմար էր Գանատայի հետ վաճառակցութեան համար, և Պագորի ընկերութիւնը, որոյ կեդրոնական տունն էր 'ի Մաքինաւ, աստ առեւտրական կայարան մը հաստատեց մորթի վաճառականութեան համար. և այս հաստատութիւնը Հնդկաց ծովային արշաւանքներէն պաշտպանելու համար՝ անմիջապէս մօտը բերդ մը շինուեցաւ, որ նոյն ժամանակ Fort Dearborn կոչուեցաւ. Բայց 1812ին այս բերդին պահանքորդ զունդը՝ բովանդակ շարդուեցաւ. կոտորածիւն կնձնիւն՝ ցայսօր Գէորդ փուլմանի շրջի պալատին զեղեցիկ դարաստին մօտ մարգագետնի մը վրայ կը ցուցնէ մեզ այս բերդին ճիշտ դիրքը :

Այս անգութ դէպքին վրայ չորս տարի անցաւ՝ և սպիտակք դեռ չէին համարձակեր առաջ գալ. մինչև որ վերջապէս Հնդկիք 1816ին այժմեան Շիգակոյի մօտ փառքի երկիր մը թողուցին իրենց : Բերդը կրկին շինեցին և դարձեալ պահպան զունդ մը ձգեցին, և կամաց կամաց անժանօթ անձանց փոքրիկ խումբ մը ձևացաւ անդ, որ կը ստանային 'ի Հնդկաց կենդա-

նեաց մորթեր, փոխարէն տալով օղի եւ քաղաքականացեալ աշխարհին այլ առարկայք։ Այս նախնական վիճակը՝ բաւական ատեն տեւեց. վասն զի 1832ին Միչիկան լճին եւ Միսսիսիբի մեծ գետին մէջ գտնուած բովանդակ երկիրը՝ դեռ կատարեալ վայրենի գիւրգի մէջ էր։

Սիակայն յաջորդ տարին (1833), այս փառաւոր քաղաքին յիշատակարանաց մէջ յաւիտենական պարծանք մը պիտի ունենայ՝ որովհետեւ տեղւոյն երկրորդասան ընտրողաց մետասանին որոշմամբ՝ Շիգակո գիւղաքաղաք կոչուեցաւ, եւ հետեւաբար ամենայն ինչ կարգի դրուեցաւ։ չորս տարի վերջ (1837) արդէն քաղաքի ձև առեր էր. այն տտեն 4179 բնակիչ ունէր, եւ « Տեղական պատմութեան բնկերութեան » հրատարակեալ յիշատակարանաց նայելով՝ այս բնակչաց մին իբր դատարկաշրջիկ դատապարտուեցաւ։

Յայտնի է թէ այս քաղաքին անունը փառաւոր ծագում մը չունի. Շիգակո հնդիկ բառ մ'է որ կը նշանակէ վայրի առիւ կամ նաեւ խանտակուզ կոչուած գարշառտ փոքրիկ չորքոտանին. այս անունը սրուած էր այս տեղւոյն լճացեալ եւ մեռեալ ջրոց բուրած գարշառտութեան պատճառաւ։ Այն ժամանակ յանդուգն եւ անհատատայի մարգարէութիւն մը կրնար թուիլ եթէ ըսուէր՝ որ այս աղտեղի տեղւոյն վրայ կէս դարու մէջ՝ աշխարհիս ամենէն աւելի մեծ եւ առողջարար քաղաքաց մին պիտի կանգնուէր, եւ իւր անունը ոչ միայն նոր՝ այլ եւ հին աշխարհի մէջ պիտի յարգուէր եւ փառաւորուէր։

Անկարելի է այսօրուան օրս կարճ յօդուածով մը նկարագրել Շիգակո. վասն զի չոր եւ անհամ ցանկ պիտի ըլլայ այն մեծամեծ գործոց զորս ըրեր է եւ կ'ընէ. ոչ միայն իւր շինութիւններն եւ ձեռնարկներն՝ այլ նաեւ ձախորդութիւններն ալ մեծ եղած են. եւ կ'ըսեն թէ 1874ին մեծ հրդեհին ժամանակ՝ բնակիչք կը մխիթարուէին գիտնալով որ աշխարհի ամենէն մեծ հրդեհն է։

Նոյն տարւոյն հոկտեմբեր Ցին Օ'լէրի անուամբ կնոջ մը կողմէ՝ աքացիով մը կը տապալէ կանթեղը. սա կը հրդեհէ մերձակայ յարդը, յարդը զախուռ, ախուռը՝ սուռը, սուռը զքաղաքը որ այն ատեն 350, 000է աւելի բնակիչ ունէր։ Երեք օր տեւեց հրդեհը եւ երեք ու կէս քառակուսի մղոն ընդարձակութեամբ տարածուեցաւ. 17, 450 շէնք այրեցան, գրեթէ 100, 000 անձինք անյարկ մնացին, եւ հետեւեալ ֆուսներն առևտրական գործոց առժամանակեայ խափանումն ալ 'ի միասին հաշուելով՝ մէկ միլիոնի ֆուս եղաւ։ Աշխարհիս ամէն կողմէն տեղացին օգնութիւնք եւ նուէրք, եւ քիչ աւտենէն ամենէն աւելի խեղճերուն 20 միլիոնի չափ ողորմութիւնք բաշխեցան. եւ դեռ տարի մը չանցած արդէն երկու հարիւր միլիոնի ծախք եղած էր շէնքերու համար։

Ինչպէս Ներոնի հրդեհը եւ Լոնտրայի կրակը՝ Շիգակոյինն ալ մաքրեց եւ նորոգեց քաղաքը. իւր յատուկ անիւնէն վերականգնացած այս նոր փիւնիկը՝ աչք մը տուաւ իւր չորս կողմը եւ տեսաւ որ իւր ուղեաց զիրքն շատ ցած էր, այսինքն լճին մակերեսութէն մէկ մէտրէն քիչ մ'աւելի բարձր. եւ

խկոյն որոշեց դարմանել այս պակասութիւնն , և քիչ ատենի մէջ վերջացուց այս ահագին աշխատութիւնն՝ երեք ու կէս մեդր բարձրացնելով բոլոր իւր ճամբաները :

Ուստի լճին և բարձրաւանդակին մէջ զտնուելով՝ միշտ հովահարեալ է. և այնչափ՝ որ մինչև կ'ըսուի թէ անդ գործածուած հովանոցներուն դարստակը շարժուն և սահուն կը շինեն՝ որպէս զի եթէ դիպուածով հողմոյ բռնն հարուածի մը պատճառաւ դառնան՝ իսկոյն հակառակ կողմով ալ կարենան զայն գործածել : Զերմութեան աստիճանը բարեխառն է՝ մանաւանդ թէ զով , և տարեկան միջին հաշուով 9 , 5 հար. ամառնային տաքը այս վերջին քսան տարիներուն մէջ միջին հաշուով եղաւ 24 , 5 : մինչևեւ ձմեռը ջեմմաւափը կ'իջնէ մինչև 'ի — 7 :

Սակայն այսու հանդերձ՝ անդ ուր ժամանակաւ ժանտաբեր և զարշահոտ ճախնային երկիր մ'էր՝ այժմ առողջ կլիմայ մը կը վայելէ . և զայս յայտնի կը ցուցնէ Շիգակոյի տարեկան մահացուցակը որ 18 , 22 է առ հազար , մինչդեռ 'ի Նիւ-Եորք 26 , 27 և 27 , 29 'ի Վիեննա :

Յայտնի թէ երկրին արուեստական բարձրացումն և այլ նմանօրինակ առողջաբանական բարելաւութիւնք՝ մեծապէս օգնեցին այս փոփոխութեան , բայց պէտք է խոստովանիլ որ նաև բնութիւնը տարօրինակ կերպով կ'օգնէ մարդկային ձեռագործին և աշխատութեան , և ինչպէս բախնք՝ այս քաղաքին յատուկ իր դրից պատճառաւ եզական այն հովահարութիւնն՝ միշտ ամենամաքուր և առողջ օդ կը մատակարարէ այս մեծ քաղաքին : Ասոր վրայ պէտք է աւելցրնել նաև տեղւոյն ժողովրդեան տեղատրութեան զրուիւնը , յիրաւի մեծամեծ շէնքեր շատ կան , բայց չկայ մի ևեթ տան մէջ ժողովրդեան խռնումն , և գրեթէ ամեն տանն կից եղած փոքր պարտէզներուն համար Շիգակո կ'ըսուի նաև Պարտիզաց քաղաք :

Քաղաքին առողջութեան ոստիկանական և տնտեսական ճիւղը՝ իւր ահագին և մեծամեծ զգուշութեանց և գործոց համար՝ շատ նեղ վիճակի մէջ ըլլալով , շաբաթն երեք անգամ՝ հազիւ կրնայ մաքրել և աւել տալ ճամբաներն և հրապարակներն , որոց բովանդակ երկայնութիւնն է 5000 մղոն : Սակայն ջուրը շատ առատապէս բաշխուած է ամենուն , ահագին ջրաբաշխական մեքենաներով որք ջուրը կ'առնուն ճէն չորս մղոն երկայնութեամբ լայն խողովակաց ձեռքով , միջին հաշուով օրական գրեթէ 700 միլիոն լիտր , պէտք է դիտել նաև որ քաղաքին լուսլեաց և աշտեղութեանց խողովակներն լիճը չեն թափիր , այլ յիլլինուա առուակն՝ որ կը միանայ ընդ Միսիսիբի :

Շարաշարեկի